



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Մարգարյանը, Մաղաք Մարտիրոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանը, Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը, առաջին կարգի մասնագետ Նաիրա Ստեփանյանը, երկրորդ կարգի մասնագետ Անի Հասրաթյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 9 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլածոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլածոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

3. Գլածոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.002 հա ընդհանուր օգտագործման հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

4. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական հատկացումներ կատարելու մասին:

5. Գլածոր համայնքի սեփականություն հանդիսացող որոշ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

6. Գլածոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.07505 հա վարելահողը մրցույթով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

7. Գլածոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.12319 հա այլ հողը աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու մասին:

Կողմ-9	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95/

Լսեցին.

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՆԱԻՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլածոր համայնքի 2021 թվականի հունվարի 21-ի թիվ 04-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1. Պակասեցնել գործառնական դասակարգման՝ 11.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից 5000.0 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ:

2. Ավելացնել գործառնական դասակարգման՝

10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին 3000.0 /երեք միլիոն / ՀՀ դրամ,